

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2015թ-ի դեկտեմբերի 23-ին կայացած  
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2015/2016 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում /ամբիոնի վարիչներ/:
2. Ուսանողական հարցման արդյունքների մասին:
3. Թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
4. «Հոգեբանության կարգավիճակը», «Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր» գիտական ժողովածուների և տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի դոցենտ Ս.Վ.Վարդանյանի «Փաստերի մեկնաբանության մեթոդը և նրա փիլիսոփայական նշանակությունը» մենագրության, «Նշանագիտություն» վերտառությամբ մագիստրոսական ծրագրի սպագրման երաշխավորման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ 2015/ 2016 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ ամբիոնի վարիչներ Գ.Շահվերդյանը, Ս.Զաքարյանը, Հ.Ավանեսյանը ներկայացրեցին իրենց ամբիոնների ընթացիկ աշխատանքները:

2. Լսեցին՝ Ուսանողական հարցման արդյունքների հարցը:

Արտահայտվեցին՝ ղեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ուսանողական հարցման արդյունքները, որոնք բավականին բարձր են:

Որոշեցին՝ ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Արտահայտվեցին՝ Ա.Բաղդասարյանը, Հ.Ավանեսյանը, Ս.Զաքարյանը: Դեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների կողմից ստացված թեկնածուական ատենախոսությունների թեմաները և գիտական ղեկավարներին:

Որոշեցին՝ Հաստատել ներկայացված ատենախոսությունների թեմաները՝ նշանակելով գիտական եկավարներին:

4. Լսեցին՝ մենագրության և հոդվածների ժողովածուների տպագրման երաշխավորության հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների կողմից ներկայացված աշխատանքները, որոնք անցել են բոլոր անհրաժեշտ փուլերը:

Արտահայտվեցին նաև պրոֆ. Հ.Միրզոյանը, Գ.Սողոմոնյանը, Հ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Ներկայացված աշխատանքները երաշխավորել տպագրության:

5. Ընթացիկ հարցեր.

Լսեցին՝ Ա.Ոսկանյանի «Հասկացման անխուսափելիությունը. Դրվագներ փիլիսոփայական հերմենևտիկայի և կազմաքանդման պատմությունից»աշխատությունը ՀՀ նախագահի մրցանակի մրցույթին մասնակցելու երաշխավորման հարցը:

Որոշեցին՝ Երաշխավորել Ա.Ոսկանյանի աշխատությունը ՀՀնախագահի մրցանակի մրցույթին մասնակցելու համար:

Նիստի նախագահ՝ Ա.Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս.Սարգսյան